ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"24"հունվարի 2013թ. № 5-Ա

«ԱՐԵՎԻՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2013թ. հունվարի 25-ից լուծել «Արևիսի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռիտա Գրիգորյանի հետ 2008թ. հունվարի 25-ին կնքված N3 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից այն զբաղեցնելը:
Հիմք՝ Ռ.Գրիգորյանի անձնական դիմումը:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ. հունվարի 24
ք. Կապան